

Կյանքի որակ (հեշտ)

Ալբերտայի քաղաքներն ընկած են բլոկների ուղղանկյունաձև ցանցում: Բլոկները նշված են հյուսիսից հարավ 0-ից R-1 կոորդինատներով, իսկ արևմուտքից արևելք՝ 0-ից C-1 կոորդինատներով:

Յուրաքանչյուր բլոկում կյանքի որակը չափվում է առանձին թվով, որը կոչվում է որակի գործակից և 1-ից **R*C** սահմաններում գտնվող թիվ է, որտեղ 1-ը ամենալավն է, իսկ **R*C**-ն՝ ամենավատը:

Քաղաքի նախագծման բաժնում ցանկանում են գտնել հյուսիսից հարավ H և արևմուտքից արևելք ուղղությամբ W չափի բլոկների ուղղանկյունաձև բազմություն, այնպիսին, որ այդ ուղղանկյունում միջին որակի գործակիցը լինի լավագույնը: Կենտ թվով որակի գործակիցներից *միջին որակի գործակից կոչվում է այն m որակի գործակիցը, որը մեծ է այդ բազմությանը պատկանող m-ից լավ որակի գործակիցների քանակը հավասար է m-ից վատ որակի գործակիցների քանակին:*

Մուտքը

Առաջին տողում տրված են, իրարից մեկական բացակով անջատված R, C, H, W ամբողջ թվերը: Հաջորդ R տողերից յուրաքանչյուրում տրված են, իրարից մեկական բացակով անջատված, C թվեր: $1 \leq R, C \leq 100, 1 \leq H \leq R, 1 \leq W \leq C$:

Ելքը

Պետք է արտածել մի թիվ - բոլոր H և W չափերով ուղղանկյունաձև բլոկներից լավագույն (այսինքն ամենափոքր) միջին որակի գործակից ունեցող ուղղանկյունաձև բլոկի միջին որակի գործակիցը:

Օրինակ

Մուտքը.

```
5 5 3 3
5 11 12 16 25
17 18 2 7 10
4 23 20 3 1
24 21 19 14 9
6 22 8 13 15
```

Ելքը.

9

Այս օրինակում, լավագույն (թվաբանորեն փոքրագույն) միջին որակի ցուցանիշը 9 է, որը ստացվում է աջ մասում գտնվող թավ գույնի թվանշաններով ենթաուղղանկյունում: